

ՅԵՅՍԵՊԵՐ ԳԻՐ ԼՐԱՅ ՄԵՇԿ ՏԵՐԱԴՐԵՎԵՆ, ՕՍՄԵՆԵՎԵՆ

ԴԱՐՁԱՔ ՆԵՐՎԻՆ

(Սամանեան մեծի տէրութեան նախարարներուն՝ միշտ օգտակար գործքեր յառաջացընելու ջանք և փցի ընելին յայտնի է։ յորոց մէջն այժմեան արտաքին գործոց վերակացու (խարիճիյէի նազը) մեծարութուսդափառ բէշիտ փաշան՝ որ իւր բնական խոհեմութեամբը իրեն յանձնըլած պաշտօնը՝ ինքնակալին կամացը համեմատ կերպով վարելու և յառաջ տանելու շանացողութիւն կընէր։

Առ ասկէ ՚ի զատ՝ քանի տարի է ո՞ր Եգիպտոսի մաստու խոռութիւնը՝ ամմէնուն անչանգաստութեանը պատճառ եղած էր, բարեբաղդ Աբրային առաջնորդութեամբը և երեւելի տէրութիւններուն միաբանութեամբը գիւրլին կերպով մը վերցըլելուն հնարը միշտ կը մոռծեր, ահա այժմ փառք բարեբարին՝ այն խռովութիւնը վերցըլեցաւ, և այս յարգամեծութը անձին ալ ՚ի բնէ խոհեմ և հաւատարիմ ըլլալը այս որպիսութենէն աղէկ մը հաստատվեցաւ ու յայտնի եղաւ։

Ուստի վեհափառ թագաւորն ալ անոր այսչափ ջանացող ըլլալը գիւռնալով ու այս գործածած խոհեմութիւնը գովելով, անոր առատօրէն պարգև շնորհելն ՚ի զատ՝ յատկապէս անոր համար մէկ փըրլանթի պատուական նըշան մի ալ շինվելուն հրաման ըրաւ։

Իւր այս նըշանին շինվելը երեսը ըրացաւ, նախայելչեալխոհեմազարդ անձը՝ մուհարբէմին 21 ին երկուշաբթի օրը իւր գէմը կոչելով, իւր բնական գթասրտութեան պահանջմամբ այն նըշանը իւր ձեռօքը անոր փողպատը (եախան) կախեց։

Իւր իւր ինտոմքը ու անոր ըրած խոհեմութեանը համար գովեստը ծանուցանող բարձու հրամանագիր մի (պէրաթ մի) ալ տըլաւ։

Ասրեխնում աբրայն իւր բնական ունեցած գթասրտութեանը և խնամածութեանը բարուցը պահանջմամբ՝ միշտ իւր տէրութեամնը պաշտօնատարներուն աստիշաններ և նըշաններ շնորհելով զանոնք կը լինամէ, մանաւուդ առաւելես անոնց ինսամք ցցյ կուտայ, որոնք որ գէշեր և ցերեկ հաւատարմութեամբ տէրութեանը համար կաշխատին, և բարի գործքեր յառաջացընելու չանք կընէն։

Ուստի աբքունի ապարանքը (մագինը) պաշքեաթիազ գըտնըլող արժանայարդ թէվֆիդ պէյ էֆէնտիին ՚ի ընէ խոհեմ և հաւատարիմ և ամմէն կերպով աբրայական շնորհքներու արժանաւոր ըլլալուն, և ինքն ալառաջն ըութպէյին երկրորդ սընըլքը ունենալուն համար, վեհափառ հնքնակալը՝ սոյն ըութպէյին առաջն սընըլքի աստիճանը և պէտք եղած նըշանը անոր շնորհեց։

Մւ նցյն տեղը քեաթիազ գըտնըլող ու երրորդ ըութպէն ունեցող ւէֆիդ պէյին, և խոհեմ էֆէնտիին ալ երկրորդ ըութպէն և նըշանները պարզեց։ Մւ ասոնց Աբրայէն շնորհ եղած ապարհաններն ալ թէշիթաթի տէֆթէրը խայտ եղան։

Վ եհափառ թագաւորը որ ընդ երկայն աւուրս կացցէ, մինչև հիմա ողքան որ բարեկարգութիւններ հաստատեց, ամմէնքն ալ արդարութեան կեդրոնին վրայ կը շըլին։ Ուստի մինչև հիմա վագրֆ տուն ու խմանութ և այլ ինչ ունեցողներուն յայտնի էր՝ որ երբ առուծախ (Փէրաղ) կը լար, հարիւրին 10 դուշալք կը տըրվէր։ և երբ երենց հօրմէն կամ մօրմէն կը մնար (դի ինթիգալ կը լար,) այն ժամանակը հարիւրին 5 դուռուշ կը տըրվէր։

Բայց այս խարճը շատկէկ ըլլալով, ոմանք ՚ի հարկէ առած բաներնուն գինը շիտակ չէին իմացըներ։ և ոմանք ալ այն խարճը տալու կարողութիւն չունենալով, խարճ չառնըլու համար աղերսագիր կը մատուցանէին։

Վայ այս անկարգութիւնները չըլլալուն, և այս բանին ալ բարեխառնութիւն մը տըրվելուն համար էվգաֆ նազըրի էֆէնտիին յայտարար գէօ (լահիա) մը գըրէց, և արդարութեան վըճուոց ժողովցն մոտցց։

Ուստի ժողովն ալ նցյն գրին միտքը աղէկ մը իմանալէն յետոյ՝ մէջը գըրվածներուն գործի դըրվիլը պատշաճ տեսաւ, և բարեխնամ Աբրային հրամանաւուն ալ գործի դըրվեցաւ։

Մւ ահա այն գըրված կամոններն ալ ասոնք են։ ՚՚ յութիւնու տուն ու խանութ և այլ ինչ ունեցողներուն առուծախ (Փէրաղ) ըրած ժամանակին հարիւրին 3, և հազարին 30 դուռուշ խարճ առնըլի։ Մւ հօրմէն կամ մօրմէն մնացած առենը որ ինթիգալ պիտի ըլլայ, այն ժամանակը՝ հազարին 15 դուռուշ

առնըլի, և այս առնըլելիք խարձին համար ալ ամմէնը հաւսասր բըսնըլի:

Որովհետեւ թէ այս խարձը տըրվելու ժամանակը դիւրութիւն մը ըլլալու, և թէ տէրութեանը եկամուտին վեաս ըս գտըլու, և թէ այն աղերսադիր մուտոցանողներուն ալ պատճառ մը ըս մնալու համար՝ նախայիշեալ կերպը գործի պիտի դըրվի, ահա այսուհեաւ տռաջքի պէս աղերսանք ընողներուն թոյլուութիւն ըլլայ:

Եւ եթէ այս կանոնին ալ գէմ կեցող և խարձը ըս տըլող և նենգութիւն ընող ըլլայ, և կամ թէ առնողը ու ծախողը և կամ ձապին ալ առնգ խօսք մէկ ընելով ստոյգ գինը ըընացընեննէ, այն ժամանակը քննութիւն ըլլալով՝ առնըլելիք խարձին երկու գինը առնըլի: Եւ եթէ ձապին յանցանքը ու անոնց հետ ըլլալը ստուգիլի, անոր ալ պատիժը տըրվի. և այս կերպը ու կանոնը մշտնջենաւոր գործ ածվի:

Եւ մինչև հիմա սուլդան Մէհմեմետ, և սուլդան Պայտղիտ, և սուլդան Սիւլէյման, նաև առաջքի թագաւորներուն վագլֆները որոշ և զատ ըլլալով, նաև նախայիշեալ եվգաֆին ներքեւ միայն գըտնըլված տեղերէն մահլիւլ մահացները երեոր կըծախվէր, այն առնողներուն տըրված սէնէտները եվգաֆ նազըրին կողմանէ կըզըմուըլի:

Ուստի այսուհետեւ Օսմաննեան տէրութեան քաղաքներուն մէջ գըտնըլված տեղլանքը որ վագլֆին կըլայ թող ըլլայ, եթէ ծախվելու և կամ ինթիրալ ըլլալը ըլլայ, այն ժամանակը իրենց տեղի միւթէլլիւլն և խայմախամը պէտք եղած սէնէտը զըմուէ ու տայ, և այն տեղի դատաւորն ալ եվգաֆ նազըրին զըմուռին տեղը սահ քաշէ: Եւ եթէ այն տեղը միւթէլլիւլի և խայմախամ ըլլալըլի, այն ժամանակը եվգաֆ նազըրին կողմանէ զըմուըլու համար՝ որպիսութիւնը արքայանիստ քաղաքը իմացումն ըլլալով հրամանստիր առնըլի”:

Իհա այս կերպը պէտք եղած տեղերուն իմացընելու և այնպէս գործի դըրվելու համար, հրամանագիրները և նախայիշեալ լայիհային մէկ մէկ օրինակները խըրկըլեցան. և որպիսութիւնը եվգաֆի հիւմայուն նազըրին իմացումն տըրվելով, ամմէնուն ալ հրատարէկելու համար՝ այս տեղը ալ տըպվեցաւ:

(Օ)սմաննեան բարձու տէրութեան նախարարները որովհետեւ իրենց վերաբերեալ մէծամեծ գործքերը յառաջ վարելու, և մէկ կողմէն ալ հասարակութեան հանդստութիւնը խորհելու համար բարակ մասածութեանց մէջ են,

Իհա հասարակութենէն դատ և կամ ուրիշ գործունեցող մարդկանց՝ այն նախարարներուն տունը և եալըն երթալին ըս հարկաւորիր. այլ անոնց համար

յատկացեալ դուները միայն գնալով, իրենց ինդիքը ու բողոքը իմացըներուն պէս՝ արդարութեամբ իրենց գործքը տեսնըլիլը յայտնի է:

Ուստի այսուհետեւ այնպիսիները ըլլայ որ առանց հրամանի այն մէծարու անձինքներուն տունը և եալըն երթան, և պարապ տեղը գլխացաւութիւն տալէն ՚ի զտու՝ հասարակութեան վայ անոնց ըրած օգտակար մատաճմունքներուն արգելք և խափան ըլլան:

Եւ ինչպէս որ վերը յիշեցինք՝ միայն անոնց յատկացեալ դուները երթան, ու իրենց ինդիքը մատուցանեն:

Իհա սյժմ մէհափառ ինքնակալին այս կերպիւ հրամանը՝ ամմէն մարդ գիտնալու համար այս տեղը ալ տըպվեցաւ:

Կնատօլուի և րումելիի մէջ գըտնըլված պազի տեղերուն բնակիչներէն գողութիւն ընողներուն դատաստանը՝ իրենց տեղի ժողովցն մէջ տեսնըլիլէն, և յանցանընին ստուգվէլին յետոյ, փոխարինաբար անոնց պատիժը տըրվելու համար՝ այն ժողովներուն կողմանէ յայտաբար գըրերով արքայանիստ քաղաքը իմացումն եղած էր:

Վզա այն գըրերուն վրայ արդարութեան վըժուոյ ժողովցն մէջ խորհրդակցութիւն ըլլալով, արժանաւոր պատիժներուն համար գըրված մազպադան ընդհանուր ժողովցն ներկայութեանն ալ կըկին կարդացվէլին յետոյ՝ ինքնակալին մատուցվէր ու գործի դըրվէլուն հրամանը առնըլվէր է: Որ այժմ նախայիշեալ ժողովներուն իմացումն տըրվելով, ամմէնուն հրատարէկելու համար՝ այն յանցաւորներուն յանցանքը և անուանքը և պատիժները ներքելը տըպվեցան:

Պըճայի պէրղամա քաղաքը ըլլանըլով՝ Ալ պէկիլ գիւղին չիւսէյին գողին գողցածը տիրոջը տըրվելով, իրեն ձեռքը ոտքը կապված արքայանիստ քաղաքը նըրկըլեցը է:

Վ.յո մարդը բանտարգեալ եղած օրէն մինչև երեք տարի փըրանկան սնարդ գործոյ մէջը իր տեղը ծառայել տալը թէ և հարկաւոր էր, բայց այս կողմը նըրկըլեած ըլլալուն համար՝ քիւրէկը մինչև երեք տարի պիտի ծառայէ:

Վ.յուհետեւ այս կերպ յանցաւորները՝ այս կողմը ըս նըրկըլեցը, իրենց բանըլված տեղը բանտը ողին գործին, և այնպէս արքայանիստ քաղաքը ծանուցանելով հրաման առնըլվէլին յետոյ, իրենց գըրնըլուծ տեղը պիտի ծառայէն:

|| Ակընեող քաղաքը բըռնըլված Մէհեմմէտ գորին
գրքած գրաստը տիրոջը տըրվելեն յետոյ, այն տեղը
իւր բանտարգեալ եղած օրէն՝ մինչև երեք տարի ա-
նարդ գործոց մէջը փրանկան պիտի ծառայէ :

|| Իմա քաղաքը բըռնըլված՝ Խիմիլը գիւղէն Մէ-
հեմմէտ ալի, և սցն քաղաքին խաստավայէն չավուշ Մէ-
հեմմէտ, և ասոնց ընկերները՝ Սիւլյամն ու Օսման,
այս չորս գողերուն գողցած բաները երեան ելալուն
համար, իրենց գըտնըլված տէղը բանտարգեալ եղած
օրէն՝ մինչև երեք տարի անարդ գործոց մէջը փրան-
կան պիտի ծառայէն :

|| Ուշավիտին քաղաքին կցորդ եղեալ նէֆսի չալ-
կոչված քաղաքը բըռնըլված Մուսդաֆա ու ասոր ըն-
կերը Մուսսա, այս գողերուն գողցածը տիրոջը տըր-
վելով, իրենց բանտարգեալ եղած օրէն՝ մինչև երեք
տարի անարդ գործոց մէջը փրանկան պիտի ծառայէն :

|| Ազլատի քաղաքը Տէլու անունով գողը բըռնը-
լվէր, բայց թիթգօ անունով տաոր ընկերը փախերէ .
և գողցած ինչքերնուն մէկ քիչը երեան ելած ըլլա-
լով, անիկա տիրոջը տըրվերէ . և միւս մա-
սած ինչքը ու այն փախչողը աղեկ մը բընտըռվելով
երբոր գըտնըլվի, այս կողմը իմացումն պիտի ըլլայ;
Եւ նախայիշեալ բըռնըլող գողն ալ բանտը գըրված-
օրէն՝ մինչև երեք տարի անարդ գործոց մէջը փրան-
կան պիտի ծառայէ :

|| Օֆձէ քաղաքը բըռնըլված՝ Վարտար կոչեցեալ
զիւղէն Վարօն անունով գոկին իր տունէն շատ գող-
ցած բաներ ելերէ . ուստի այն գողցածները տիրոջը
տըրվելով, ինքը փրանկան անարդ գործոց մէջը պիտի
ծառայէ մինչև երեք տարի կենալու պայմանաւ :

|| Ահթիման քաղաքը բըռնըլված Խըբդի Ահմէտ և
տուր ընկերը Պարօն և Ահթէ և Ատսինան, այս չորս
գողերուն գողցածը երեան ելալուն համար, ասոնք
ալ իրանկան անարդ գործոց մէջը պիտի ծառայէն
մինչև երեք տարի :

|| ատիդ և Քէտէղարա և չավէ և Զիւլուն ա-
ռաւուն ըսկած տեղվանկէն բըռնըլված միւտէրիս Մուս-
ս աջատ Էֆէնտիին եէկէնը Ահմէտ, ու ասոր եղբայրը
Մէկի, և Գարդեօկի ըսկած գիւղէն ըէտիֆ Ահմէտ,
ու ասոնց ընկերները Էօմէր, և ասաքիրի խասսա կո-
չեցւալ զօրքերէն Ապտուլոհ, և Տցլանձըգ գիւղէն՝
Օսման, և Էսէն պէկ գիւղէն՝ Պէքիր, և Քէուրադ

գիւղէն՝ Մէհեմմէտ, և Պաղճը գիւղէն՝ Օսման, գա-
նըգ Հիւտէլին, Մէհեմմէտ, չօլադ Ապտուլահ, Հիւ-
տէլին, և Չավուշ գիւղէն՝ Ալի, այս տասն և չորս մար-
դիկներն ալ գողութիւն ըրերեն . և ձեռքերնին գըտ-
նըլածները տիրոջը տըրվելէն յետոյ, իրենք ալ Ամաս-
եայի մէջ բանտը գըրվերէն : Ուստի այն գողցած բա-
ներէն կորուցած և թէլէփ ըրած բաներուն գինը
հատուցանելու պայմանաւ՝ մինչև երեք տարի փրան-
կան անարդ գործոց մէջը պիտի ծառայէն :

|| Եօլոպտարի քաղաքին կողմերէն բըռնըլված Խըբ-
դի Մուսդաֆա գողին գողցած գրաստը և ուղիւ
բաները տիրոջնուն տըրվելով, ինքն ալ բանտարգեալ
եղած օրէն՝ մինչև երեք տարի անարդ գործոց մէջը
պիտի ծառայէ :

|| Արային հրամանաւը նախկին ըսթանդօլ խատըմ
Մէհեմմէտ թէվիդիդ պէյ էֆէնտիին՝ այս մուհարրէ-
մի ամսոյն է էն համարվելով, Անատոլուի խաղէսքէ-
րութեան աստիճանը չնորհվեցաւ :

